ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3976-Ա «14 » օգոստոսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի Հ.3067-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ի կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 20.07.2026թ. հ.20-Ել-31773 եզրակացությունը, ինչպես նաև քաղաքացի Նունե Սաֆարյանի 16.11.2022թ. հ.Դ-106596-22 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 2-ի «Կենտրոն համայնքի Նորագյուղ հ.23/5 բնակելի տան նկատմամբ Սարգիս, Նունե, Տիգրան Սաֆարյանների և Միլենա Եղիազարյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.3067-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վերականգնել ք.Երևան, Կենտրոն, Նորագյուղ հ.23/5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սարգիս Սաֆարյանի, Նունե Սաֆարյանի, Տիգրան Սաֆարյանի և Միլենա Եղիազարյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 86.23քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 86.23քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:»,

2) Որոշումը լրացնել նոր 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա Երևան քաղաքի Նորագյուղ հ.23/5 հասցեում գտնվող 86.23 քառ.մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանել բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման:»:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246